

ՏՆՕՐԿԵ-ԽՍՐԱԳՐԱԳԵՑ

Z. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԶՆՈՐԴԱԳՐԱԹԻՒՆ

Տարեկան	500	դր.
Վեցամսեայ	250	»
Յսամսեայ	150	»
Վրաստանում արկ.	70	ճր.

Բաժանորդագրութիւն կ'սկսի ման ամսոյ 1ին, եւ 15

100 ՓԱՐԱ



Fondateur M. MAMOURIAN

Directeur-Rédacteur en chef H. MAMOURIAN

„Arévelian Mamoul,“ JOURNAL ARMÉNIEN QUOTIDIEN

100 ՓԱՐԱ

Օրաթերթ ազգային եւ փառաբանական

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Որքան կուշանայ աշխարհի խաղաղացումը, որքան կ'ուշանայ Համաձայնական պետութեան թշնամի երկիրներու հետ կնքելիք հաշտութեան դաշնագիրներու վաւերացումը և անոնց անթերի գործադրութեան համար կանխորոշ պայմանագրութիւններու կիրարկումը, այնքան աւելի կ'հնճոտին թշնամի երկիրներու ներքին կացութիւնները:

Այդ կնճոտ կացութեանց մէջ առաջին տեղը կ'ընեն Գերմանիա և Թուրքիա:

Վերսայլի դաշնագրին կնքուցու աշխարհի խաղաղութիւնն ապահովելու թէ՛ ապագայ կնճոտութիւններու նոր դուռ սը բանալու համար:

Յրանա՛ որ ուղղակի շահակիցն կ'հանդիսանա Գերմանիոյ հետ կնքուելիք հաշտութեան մը պայմաններուն:

Յրանա՛ միայնակ չէր այդ դաշնագրի կնքումի պահուն, որիչ պետութիւններու եւս կ'մասնակցէին խորհրդակցութեանց, սակայն Յրանա՛ իբր անմիջական դրացի և ուղղակի շահակից Գերմանիոյ պարտագրութիւք հաշտութեան պայմաններուն, չուզեց աւելի մեղմ ու թոյլտու պայմաններու վրայ անդրադառնալ, որոնք հաւանականաբար կ'ընան առաջարկուած ըլլալ Ամերիկայի և Անգլիոյ կողմէ:

Գլխմասն առողջութիւնի մնաց Յրանա՛ Գերմանիայի դաշնագրին պայմաններուն վրայ որոնց գործադրութեան համար մշտապէս պէտք է զէնքի տակ պահէ բուսական կարևոր ոյժեր, ի հարկին անոր գործադրութիւնն պահանջուելու և հակառակ պայագային սպառնալու համար:

Առայժմ համաձայնական խառն ոյժեր կ'մնան Ռէնի գերման հողին վրայ այդ դաշնագրին անթերի գործադրութեան հսկելու համար, սակայն կարելի է երաշխաւորել թէ՛ վաղը միևնոյն կացութիւնն անվթար պահել հնարուար պիտի դառնայ:

Ներկայ ժամուս Գերմանիա նոր վիճակով մը կ'ներկայանայ:

Գերման գորապաշտութեան կուսակից զինուորականութիւնն կ'յաջողի տապալել Գերմանիոյ մէջ՝ պատերազմէն յետոյ՝ հանրապետական ձևին տակ հաստատուած կառավարութիւնն և Համաձայնականներու կողմէ իբրև յանցաւոր պահանջուած բարձրատիճան զինուորական մը իբրև զիկաթօր կ'բազմի Վիլհելմի աթոռին վրայ:

Նախարան մը զէպի կայսերականութեան հաստատումը: Ի՞նչ զիրք պիտի բռնին Համաձայնական զինակից պետութիւններն Գերմանիոյ ներքին այս յեղափոխութեան առջև որ զէպի միապետութիւն կ'ձգտի:

Բնականաբար չպիտի ուզին միջամտել, խնկուածութեամբ շարժելու համար, Գերմանիոյ ներքին խնդիրներուն, սակայն միւս կողմէ երևան կուգայ թէ՛ Գերմանիա զինութեամբ չէ եղած և Գերմանացուց զէնքիկցութիւնն կատարեալ չէ: Արդ՝ եթէ վաղ Գերմանիոյ կայսերականութեան կուսակիցներն յաջողին վերահաստատել հին գրութիւնն և այդ գրութեան հեղինակներն բացարձակապէս մերժեն գործադրել Վերսայլի դաշնագրին, ի՞նչ զիրք բռնել պիտի ստիպւին Համաձայնական մեծ պետութիւնները:

Ինչպէս կ'տեսնենք, խնդիրն սչ միայն շատ փափուկ է, այլ նաև կնճոտա խնդիրն կ'պարզուի եթէ Գերմանիոյ մէջ հաստատուելիք նոր կառավարութիւնն կէտ առ կէտ խոստանայ գործադրել երկուստեք ընդունուած և ստորագրուած դաշնագրին պայմանները:

Բնականաբար այժմու Ռայստակը պիտի լուծուի և Ժողովրդային ընդհանուր քուէարկութեան թերևս պիտի զիմուի կառավարական ձևին ընտրութեան համար, եթէ յառաջդիմական, հանրապետական ու հանրապետական աարբերն յաջողին մեծամասնութիւն շահել, այլևս խնդիր չմնար, նկատելով որ այդ տարրերու կողմէ ընդունուեցաւ ու ստորագրուեցաւ Վերսայլի դաշնագիրը, սակայն եթէ հակառակն պատահի և կայսերականներն յաջողին, մութ կ'մնայ ապագան և նոր անորոշութիւններ պիտի ուրուագծուին Արևմուտքի մէջ:

Եթէ սչ նոյնաման, գրեթէ նոյնքան կնճոտ հանգոյց մըն ալ դարձած է Թուրքիոյ հաշտութեան հարցը:

Գերմանիոյ մէջ ստեղծուած նոր կացութիւնը, կ'ստիպէ Համաձայնական պետութիւններն արագ և արմատական կարգադրութիւններ ընելու Թուրքիոյ մասին:

Այդ կարգադրութիւններն արդէն սկսած են Պոլիս գրեթէ գրուուած է և Սեւ ծովն, ինչպէս նաև Միջերկրականը եղբորդ ինչ ինչ կէտեր:

պիտի ներկայացուի վերջնագիր մը Միլլի շարժումի պիտակին տակ գործող իթթիհատակներուն, որպէսզի զէնքիկց ըլլան:

Մուսթաֆա Քէմալ հաւանական է որ փորձառութեանց վրայ հիմնուելով, պիտի մերժէ և մինչև վերջին վայրկեանն ընդդիմանալու պիտի արտաբանուի:

Համաձայնական պետութիւններն այս անգամ չպիտի թողուն թերի և անկատար իրենց գործունէութիւնն և ինչ որ պարտաւոր էին ընելու զինագործուն մտիջնապէս յետոյ, ի գործ պիտի դնեն այս անգամ և ջարդաբար ընեն իթթիհատակն ոճրագործ ոյժերը:

Պոլսոյ մասին բացի այն լուրերէն որոնք հրատարակեցինք, կ'ըլլին նաև կարգ մը ուրիշ լուրեր կարգ մը ձեռքարկութիւններու մասին, սակայն զի ուրեք ստուգութիւն մը չկայ, որոշ ու յայտնի եղածն այն է որ դաշնակից

պետութիւններն գրուած են զինուորականապէս թուրքերու մայրաքաղաքն և այս անգամ լրջօրէն ձեռնարկած են մաքրագործումի:

Այս մաքրագործումէն յետոյ պիտի սարտագրուին Թուրքիոյ՝ Համաժողովին դաշնագրին պայմանները:

Իսկ ուսական սովիէթ կառավարութեան հետ անուղղակի բանակցութիւններն կ'շարունակուին Անգլիական հեռատեսութիւնն է որ դարձեալ յառաջապահն եղաւ այդ բանակցութեանց որոնք թերևս յանդիս եղբակացութեան մը և ընդ միջո փրկին աշխարհն պոլշէվիք մղձաւանջէն:

Կիլիկիոյ կողմէ զժբազդաբար որեւէ լուր մը չէ կրցած հասնել չուրջ շաբաթէ մը ի վեր և չենք գիտեր թէ մեր վերջին աղիտարչ թղթակցութիւնէն յետոյ ինչ նոր անցուղարձեր պատահեցան հայկական այդ հողամասին վրայ:

Ինչպէս որոշած էր Լճուտոնի վարչապետներու խորհուրդն, ինոր օգնական ոյժեր պիտի զրկուէին Կիլիկիա և Հայերու զէնք պիտի հայթայթուէր ի հարկին ինքնապաշտպանութեան զիմու համար:

Վէնիզէլոսի առաջադիւն ևս զուրկ չէ կարևորութիւն և ընդունելութիւն գտնծ է վարչապետներու խորհուրդէն, որ եթէ գործադրութեան դրուել սկսի, մեծապէս պիտի զիւրացնէ Համաձայնականներու գործն Թուրքիոյ մէջ:

Հ. Մ.

ՀԱՅՏԵԼԻՔՆ ՄԵՋ

Ներկայ թիւով կ'հրատարակուի Ա. Մանուի մէջ Մուշեղ Արքեպ. ի գրական ու իմաստասիրական մէկ յօդուածը. «Ռեչանկութեան Գաղափարականը»:

Հոյակապ էլ մը՝ որու շարադրութեան գաղտնիքին միակ ծանօթ է Մուշեղ Արքազան:

Այդ յօդուածն արատաւրուած է Արմաշու գարնիանքին 25 ամեայ Յարեւանին առթիւ հրատարակուած հատուրէն, որ 1914ին տպագրուած է թէև, բայց պատերազմի պատճառաւ չըջարկութեան չէգրուած հասկնալի պատճառներով:

Այդ ստուար ու պատկերազարդ գեղեցիկ տպագրութեամբ հատորն, որու գինն 100 դր. է, գեղեցիկ հաւաքածոյ մըն է, որու մէջ յօդուածներ ունին զարեպանէ վարդապետ ձեռնագրուած բոլոր աշակերտներն ու անոնց ուսուցիչները:

Այդ հատորին մէջ որ 400է աւելի մեծագիր էջերէ կ'բաղկանայ, կ'երևին Օրմանեան, Գուրբան, Զաւէն, Բարսէլ, Գնեկ, Ղևնդ, Գրիգորիս, Սըմբատ, Թորոզմ Արքազաններն և Պարզե, Շահէ, Պատկ և ին վարդապետներն որոցմէ շատեր զոհերն եղան մեծ եղեռնին:

Տեղեկութիւններ կան Արմաշի

ԵՍ

ԵՐԶԱՆՎՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՎԱՆԸ

Կեանքերու խօսական վազբը տարանալի է թէ զէպի երջանկութիւն կը զիմէ: Եթէ երբեք կարելի ըլլար, որ ամէն կիրքեր մարէին մարդկային կուճքին տակ, համաշխարհային հոգեբանական անդամուրուծութեան մը սղղեցուցութեան ներքև, երջանկութեան կիրքը անոնցմէ միակ վերապրող պիտի ըլլար:

Արգոնաւորայները ոսկեգեղմ փընտրուցին. մարդկութեան ոսկեգեղմ երջանկութիւնն է, որուն փոտտուքը բերաւ որ կեանքն արժած է: Աշխարհի խաչատուած ճամբաներուն վրայ մարդկային ստուերները կ'անցնին ու կը գառնան. օրհասական կեանքերու հանգիւններ. ծիծաղիք քրիշններ, լացի կոծեր, զոհուականութեան ժպիտներ, պարտութեան հեջեկանքներ, ու յաղթանակի ազգակ-

ներ զիրար կը հրձակեն. իրարու տեղ կը բռնեն Ոմանք ոսկիէն, ուրիշներ տիղմէն, ոմանք սէրէն և ուրիշներ տափէն կը կարծեն ձձկ երջանկութեան փոփաքուած շիթերը: Գահիճներ՝ նահատակներու արիւնէն, և մարտիրոսներ տառապանքէն ու սիրուած տնջանքներէն կը խմեն գոյն Սեւ չկայ մարդ մը. որ տառապանք սիրած ըլլայ տառապանքին համար:

Կեանքի յաւիտեական ճամբորդութեան միջոցին եթէ բարձրագոյն իտէալով զինովցած մարդիկ կը նախընտրեն տառապանքի ու անձկութեան դերբուկները, պատճառը այն է, որ անոնք ինքզինքնին կարող կը զգան այդ ճամբաներուն խելայեղող անդունդներուն եղբրքը աւելի շատ երջանկութիւն վայելելու Անոնք կը

Եմանին Այգաններուն կատարը Էրա-
 լայ (edelweiss) ծաղիկը հաւաքողնե-
 րուն. Լիոնի մարտիրոսապրովանց
 ոսկերեւոյ կազմող Պլանտին արուած
 չարարանքներէն չյազնար, և միշտ
 աւելիին տեսնուին ու խնդրանքն
 ունի, աւելի երջանիկ ըլլալու համար
 վարդապետուած յառեւտութիւնն ան-
 գամ չափազանցուած ձեւն է երջան-
 կութեան վարդապետութեան նիշէ
 երջանիկ է իր կէս-արուեստական
 յիմարութիւններուն մէջ. և Շորհն-
 հաւր, որ կեանքի նողկանքը կը քա-
 ըրողէ, և անձնասպանութեան ներքողը,
 հակառակ իր հայրենասիրութեան, կը
 փախչի զինուորութիւնէ և պատերազ-
 մի առթիւք հաւանական մահէն, և
 իր ընկերներուն համար սուր կը գնէ-
 իսկ իր կեանքը կ'անցնէ թատրոննե-
 րու և երեկոյթներու մէջ զբօսնե-
 լով. . . . Ոչ ոք կը հաւատայ, թէ մար-
 դիկ կեանքեր կը ձին մի միայն ու-
 նոնց մեանիւր անսկիւր իրենց քը
 վայելու համար

Կեանքերու նպատակը երջանկու-
 թիւնն է ու պիտի մնայ այնպէս Եւ-
 անոնք, որ երջանկութիւնը գիտու-
 թեան մը վերածիլու նախափորձը ը-
 րին, Քառայլէն մինչեւ Ժ. Ֆինո,
 կ'ընդունին, թէ երջանիկ ըլլալու ո՛չ
 միայն մարդուն իրաւունք է, այլ և
 պարտականութիւնը Այս սկզբունքը
 երջանկութեան գիտութեան ամենէն
 տիրական վարդապետութիւնը պէտք
 է նկատել:

Մարդ կրնայ երջանիկ ըլլալու իր
 իրաւունքն հրաժարիլ, տխուր կամ գե-
 րագոյն վայրկեանի մը մէջ. բայց եր-
 ջանիկ ըլլալու պարտականութիւնն հրա-
 ժարելու իրաւունքը անհատին չէ՝
 արուած: Պարտքը ընկերութիւնէն
 ստուած: Աւանդ մըն է, և մէկը
 չկրնար զայն ստանկոխել. ա-
 ունոց ընկերութեան հետ խզուելու
 Ellen Key իրաւամբ դիտել կուտայ
 մեզի. Ան որ ժանտատենդէ բռնուած
 է, դժուարաւ կրնայ իր գրացին խը-
 նամել: Բարեկարգիչ մը, իր անհատա-
 կան երջանկութեան անտարբեր՝ յա-
 ւակնութիւնը կ'ունենայ ուրիշ-
 ներուն երջանկութիւն հայթաթելու՝
 կը նմանի կոյրի մը, որ պիտի ուզէր
 աչք ունեցողներու առաջնորդելու Եզ-
 րակացութիւնը շատ յատակ է և ու-
 ըրող. «Ով որ երջանիկ չէ հղած, կ'ըսէ
 Ժան Ֆինո, թերացած է իր պարտա-
 կանութեանց մէջ»:

Անձնասիրութիւնն մը չէ քարոզու-
 ածը. Այլասիրութեան բարձրագոյն
 յայտնութիւնն է միայն: «Քառ ընկեր-
 քառ անկերդե օրե օրե» աւետարանական
 պատուէրին ամբողջական ու քրիստո-
 նէական գործադրութիւնն է պահան-
 ջուածը: Եւ այն դարերն ու մարդերը
 միայն մեծ կոչուելու արժանի են,
 որոնք կրցած են իրենց ապրած ժա-
 մանակին ու ապագային վրայ երջան-
 կութեան պուտ մը լոյս կաթեցնել:

Երջանկութեան փափաքը տիեզերա-
 կան է. իսկ անոր տիրանալու համար
 գործածուած միջոցներուն կիրարկումը
 համամարդկային սխալ մը, աւա՛ղ:
 «Առաքանչ Բագաւորութիւնը յեր Վեջն է»
 Գրիստոսի խօսքը երբեք այլքան սը-
 խալ չէր ըմբռնուած: Եթէ Աստուծոյ
 թագաւորութիւնը երանութեան վիճակ
 մըն է մարդու համար, երջանկութիւնը
 ուրիշ բան չէ, եթէ ոչ հոգեւին ըզ-
 րացումը, վայելուած երանութիւն մը
 միայն: Եւ այդ երանութիւնը մատ-
 չելի է ամենուն, արեւի լոյսին պէս,
 որ իր ջերմութիւնը կուտայ ամենուն
 հաւասարապէս: Աշխարհի մեծագոյն
 սպերճանիկները անոնք են, որոնք ի-
 րենց երջանկութիւնը կը կապեն ար-
 տաքին պարագաներու, արտաքին
 ազդեցութիւններու հետ, փոխանակ
 իրենց ներքը փնտռելու զայն: Աշխար-
 հի սպերճանկութեան մեծագոյն պատ-
 ճառը այս սխալին մէջ միայն փըն-
 տրուելու է: Միզմէ իւրաքանչիւր
 մարդ շատ աւելի ծանօթութիւն ունի
 արտաքին աշխարհի մասին, քան իր
 անձին նկատմամբ: Մարդերու անհուն

թիւ մը ինքզինքին հետ օտար ապ-
 րելու գծախառ վիճակին հնթարկուած
 է. անոնք կը նմանին այն մարդերուն,
 որոնք իրենց արտին մէջ գոյութիւն
 ունեցող սակի հանքերէն անտեղեակ,
 աւելի հետունները կը վտանգ կատարի
 հանքեր փորելու: Երջանկութեան
 ըմբռնումին սխալը մարդկային ապեր-
 ջանկութեան ծնուցիչ պատճառն է
 եղած. և երջանկութիւն չիրելու ար-
 ւեստին ապիտուութիւնը ստեղծած է
 ընկերութիւններու մէջ բարձրու-
 այն անուար սնկուումը, որ իրեն հա-
 ւասարը չընէր:

Երջանկութիւնը նիւթական պայ-
 մաններէ անկախ, մարդկային բարո-
 յակա՛նի հետ կապ ունեցող վիճակ
 մըն է: Երջանկութիւնը կ'ապրի նոյն
 իսկ շապիկէ զուրկ կուրծքի մը տակ,
 ինչպէս կը պատմէ աւանգուութիւնը:
 Եւ գերագոյն բարոյականը գեղեցկու-
 թեան արտադրութիւնն մէջն է: Այս
 նպատակը մարդկային բարոյականին
 անկիւնաքարն է: Առանց գեղեցկու-
 թեան՝ բարոյական, և առանց պար-
 տաճանաչութեան երջանկութիւն չկու-
 թարոյական. գեղեցկութիւն, պար-
 տաճանաչութիւն, և այս բարձրագոյն
 կեանքին համար ստանձնուած աշխա-
 տութիւնը մետաքսէ թելերն են եր-
 ջանկութիւն կոչուած ոսկեճամուկ
 րեհեզը հիւսելու համար: Ի զուր չէր
 որ Քառմէն-Սիլվա գրեց. «Երջանկու-
 թիւն մը միայն կայ. — պարտաճա-
 ընէլ. միթո՞ւրութիւն մը միայն կայ.
 — աշխատութիւնը վայելք մը միայն
 կայ. — փեղեցիլը»:

Հազարաւոր դարերու իմաստասի-
 րական ըմբռնումներու խտացումն է
 որ կը դուրսի մեր աչքին առջեւ, սոյն
 բանաձեւուած երջանկութեան գիտու-
 թեան, և գեղագիտական բարոյակա-
 նին մէջ: Պատմուն գեղեցկութեան հա-
 յեցողութեան մէջ կը տեսնէ կեանքին
 իսկական արժէքը: Կիւսո և Տէրիէր
 գեղեցկութեան վրայ կը հիմնեն կեան-
 քը՝ ամբողջ իր բարոյականով, իր
 դաստիարակութեամբ, իր ընտանեկան
 և ընկերական կազմակերպութեամբ.
 և Լէօնար Տը Վիլիչի, այդ վիթխարի
 գլուխը, որ իր մէջ՝ սաղմուտորեց ար-
 դիական բոլոր յառաջդիմութիւնները,
 գեղեցկութեան մէջ միայն փնտռեց
 իր հոգիին միթո՞ւրութիւնները:

Գեղեցկութեան ըմբռնումը չսահ-
 մանափակուի արձաններու, բնու-
 թեան, մարդուն և ծաղիկներուն
 գոյնին ու գիծերու համադրութեանը
 մէջ: Կը մտնէ հոգիներու կալուածը,
 և կ'իշխէ մարդկային յարաբերական
 բոլոր գործունէութեանը: Գեղեցիկ
 կեանք մը, գեղեցիկ հոգի մը, գեղե-
 ցիկ և մաքուր խղճմանք մը, գեղե-
 ցիկ յղացում մը, ո՛չ նուազ գեղեցիկ
 են քան Միլիթի արձանը, կամ աստե-
 զագարդ երկինքը:

Գեղեցիկ հոգի մը, իր գեղագիտա-
 կան բոլոր յայտնութիւններուն մէջ,
 ո՛չ միայն ինքզինքին բաւող հոգի մըն
 է, այլ և ոյժ մը, որ կրնայ ուրիշնե-
 րու կեանքին խաւարները լուսաւորել.
 կորուցութիւնները յղկել, և փրկարար
 աւաջնորդողի գերը կատարել: Եւ ար-
 դարեւ ի՞նչ է երջանկութիւնը, եթէ
 ո՛չ հագնէն ինքնաբերական: «Երջան-
 կութիւնը կատարեալ բան մըն է,
 կ'ըսէ Արիստոտէլ, որովհետեւ ինք-
 զինքին կը բաւէ. անիկա ամենունմատ-
 չելի է, որովհետեւ ո՛չ մէկունն է, բա-
 ւական է որ մարդ շնորհազրկուած ըլլ-
 լայ բնութիւնէն ամէն առաքինութիւն:
 ներու անկարող ըլլալու տեսակէտէն»:
 Այս պարտաքային մէջ մարդ անշուշտ
 իր փորձութիւնները պիտի ունենայ,
 պիտի ունենայ իր տառապանքները,
 իր զրկումները, իր հրաժարումները.
 որովհետեւ տառնց ստոնց կարելի չէ
 գեղեցկութիւն արտադրել. Պիլիճը
 կրակներու մէջէն հոսելով կ'արձա-
 նանայ. մարմարը մուրճի հարուած-
 ներով կ'անդրիմայ: Արձանին ու
 անդրիին գեղեցկութիւնները արտադ-
 րուեցան զտուելով, և մարդուն հոգե-
 կան ու բարոյական գեղեցկութիւն-
 ները պիտի արտադրուին յանուն պար-
 տականութեան կրուած հրաժարում-
 ներով:

Գեղեցկութիւնը, որուն մէջ երջան-
 կութիւնը կը թիւնէ, միեւնոյն երե-
 ւոյթով չնեղկայանար միտքերուն: Ո՛ր-
 քան տղիք գեղեցկութիւններ կան
 ինչպէս հոգիներու համար, որոնք գե-
 դեցկութիւն մը ստեղծելու, գնահա-
 տելու, ճանչնալու կարողութիւնն
 կրնանցուցիչ են: Բուին երջանկու-
 թեան օրրանը խաւարն է. խոզերը
 տիղմերու մէջ կը փնտռեն զայն, բո-
 րինին՝ գերեզմաններու մէջ, ու գայլը
 շագիղներու վրայ: Մինչ թիթեանիկ-
 ները իրենց երջանկութիւնը կը թըխ-
 սեն բիրտաբերեան ծաղիկներու համ-
 բուրուող շրթներուն, և ծաղիկները՝
 լոյսերուն մէջ:

Բնութեան սանդուխին վրայ կեան-
 քը նախափորձ մըն է, որ չէ կատա-
 րելագործուած: Շարունակ վերելակե-
 լու ջանքը, սակայն, իր յառաջխա-
 դացումով հետզհետէ երջանկութեան
 ճամբան կտրելու վրայ է: Ինչպէ՞ր
 շատ կան ճամբուն վրայ: Կրօնքը իր
 նահատակները ունեցաւ. զիտութիւնը՝
 իր սուրբերը: Երջանկութիւնն ալ կը-
 րօնք մըն է ու գիտութիւնն մը միան-
 գամայն, և ապիկա բացատրութիւն մը
 պիտի չկարձէ իր կուրի գաշտին վը-
 րայ: Մեզի միայն կը մնայ հաւատաւո-
 րի բարեպաշտութեամբ մը հաւաքել
 այդ նահատակներուն, այդ սուր-
 բերուն ոսկորները, և անոնցմէ սրինգ
 շինելով երգել անոնց և մեր եր-
 ջանկութիւնները:

ՄՈՒՇԵՆՂ ԱՐՔԵՊՍ.

ԳԻՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ
 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1.— 1915Ի ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Անկարելի է որ, սյուշէվիք կառա-
 վարութեան կողմէ երևան հանուած
 ամբողջ վաւերաթղթերը անհարազատ
 ըլլան: Կարելի չէ որ Բրիտանական
 կառավարութիւնը թոյլ տուած ըլլայ
 մամուլին և զբաղմունքներուն՝ ստա-
 յող թարգմանութիւններ հրատարա-
 կել: Ինչ որ ալ ըլլայ, մենք այն հա-
 մոզումն ունինք որ այս վաւերաթղթ-
 թերը, առնուազն պիտի հայթայթեն
 մեծ թիւով խառ շահեկան ցուցումներ
 այն եղանակի մասին որով պատերազմը
 ղեկավարուած է համաձայնականներու
 կողմէ, ինչպէս նաև պատերազմին
 նպատակներուն մասին զորո շատ ան-
 գամներ հաստատեցին: Զպիտի թերա-
 նան փոփախու թէ, առանց անպատե-
 հուութեան չպիտի ըլլար, զիւսանաքի-
 տական տեսակէտով, ուէ արժէք մը
 ընծայել այս մեծ դատին թուղթերուն
 որ է պատերազմը: Բայց ինչու պահել
 գողտիք մը, որ պահուելու պատճառ
 մը չունի: Եթէ մենք կ'ուզենք որ
 լոյսը ծագի Ֆրանսայի մէջ, պատճառը
 այն է որ, անարդարութիւնը աւելի
 շուտ զարդի արտայայտուելէ՝ չափա-
 ղանց զաժան քննադատներու մտա-
 ծումներով:

Եւ մենք չենք վարանիլ այսպիսի
 նախաձեռնարկի մը առջև, որովհետեւ
 մեզ կը թուի որ, եթէ այս գաղտնի
 պահուած թուղթերու հրատարակու-
 թիւնը անպատեհութիւններ ներկայա-
 ցնէր, անոնք անշուշտ աւելի մեծ ե-
 դած պիտի ըլլային, երկու տարի
 առաջ, երբ Սէյմուր Քոքսի գրիքը լոյս
 տեսաւ, առանց ենթադրուելու բրի-
 տանական կառավարութեան արգել-
 քին, և երբ այդ վաւերաթղթերէն
 իւրաքանչիւրը արգէն երեւան հան-
 ուած և քննադատուած էր անգլիա-
 կան մամուլէն:

Լոնտոնէն առնք անցած են Նիւ-
 Եօրք և Հոստինչոն համար աւելիեր-
 կար ծածկուած պիտի մնան Ֆրանսայի
 մէջ իրը թէ մեզ շփոթեցնելին կամ մեր
 ամօթը հրապարակելին կան երկմտու-
 թիւններ. զորոնք անհրաժեշտ է փա-
 րատել:

Հոս պիտի գտնեն զաշխարհիներու
 պատճէները. և ուրիշ պատճէները,
 նուազ պաշտօնական: Օրինակի հա-

մար կան որոշ թուով հեռագիրներ և
 յուշագիրներ: որոնք անշուշտ չպի-
 տի տեսնուին զիւստագիտական
 զիւրիւրու մէջ ուր կը հաւաքուին
 պատմութեան գործիները: Եթէ, կար-
 դացուելիքները վերջնական հան-
 գամներ մը չունին, զոնէ թեղադրա-
 կան են: Անպաշտօն վաւերաթղթերը
 ստորագրութեանց փոխանակութիւնը
 կանխած են, ըլլայ համաձայնապի-
 րու նախապատրաստական կամ յա-
 ջորող, անոնք լիցու են բաւական
 յստակ ակնարկութիւններով. ուէ
 երկրորդութեան տեղի չտալու համար:

Այս պատճէները, զորո հրատա-
 րակութեան կուտանք, պիտի ծառային
 հանրութեան ցոյց տալու այն զըժ-
 ուարութիւնները որոնց հան-
 դիպած են լիազօրները, և այն
 խտտումները, որոցմով ժողովուրդնե-
 րը յանձնառու եղած են փոխազարձ
 օժանդակութիւն հայթայթելու: Եւ ա-
 ռանց պէտք տեսնուելու մեկնա-
 բանութեանց, ողջմտութեան օգնու-
 թեամբ, կարելի պիտի ըլլայ տեսնել
 թէ ու՞ր են արդար պահանջումները և
 ուրիշ կուզան միւսները, որոնք յա-
 րուցած են զօտարութիւններ, և
 որոնք լուծած են զանոնք. կամ ին-
 չո՞ւ համար տակաւին անուճելի կը
 ֆեան ուրիշներ, կամ թէ սպագայի
 վտանգները ուրիշ՞ կարելի է սպասել
 և վերջապէս ինչո՞ւ համար մենք թոյլ
 տուած ենք մեզ լսելու թէ խաղա-
 ղութիւնը գուցէ լիակատար չէ եղած:

Մենք զայս ըսինք ստանց ուէ անձ
 գատապարտելու: Մենք այս կամ այն
 խնդրը չենք դարձնել անձնական
 ճիշտ հարցերու: Միշտ զիւրիւն չէ իր
 երկրին լու ծառայել: Լուր փորձելը
 ամենազուրկ գործն է: Մենք երախ-
 տագէտ ենք ամեն ինչի որ Ֆրանսայի և
 մարդկութեան համար ըրին: Կ'ուզենք
 որ պատասխանատուութիւնները ան-
 յապաղ ցոյց տուին և արժանիքները
 յաջարձակապէս ճանչցուին ու խա-
 ղադութեան գործը հետապնդուի նը-
 ւազադոն: անարդարութեան քն իրա-
 ւարարութեան մէջ:

Ֆ. ՃԱՆ - ՏԵՐԻՆՉՈ

2.— ԼՕՆՏՈՒԻ ԳՈՇՆԱԳԻՐԸ

Լօնտոնի գաշնադիրը կնքուեցաւ
 Անգլիոյ, Ֆրանսայի, Ռուսիոյ և Իտա-
 լիոյ միջև և ստորագրուեցաւ 1915
 Ապրիլ 26ին: Դաշնագրին պատճէնը
 հրատարակուեցաւ «Ռզվէթի» մէջ
 (սովիէթներու օրկան) 1917 Նոյեմբ. 28ին,
 և Անգլիերենի թարգմանուեցաւ:
 Ահա այդ վաւերաթուղթը:
 «Լօնտոնի իտալական դեսպան
 Մարքիզ Էմբէրիալի, յանուն իր կա-
 ռավարութեան պատիւ ունի հարգողե-
 լու հետեւեալ յուշագիրը արտ. գործոց
 նախարար սըր Էտուարտ Կրէյի, Ֆը-
 րանսայի դեսպան Մ. Գամպոնի և Ռու-
 սիոյ դեսպան կոմս Պէնքէնտօրֆի:

Յ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

Յօդ. 1.— Զինուորական պայմա-
 նագրութիւն մը կնքուած է առանց
 պայմանաժամի. Ֆրանսայի, Մեծն-
 Բրիտանիոյ, Ռուսիոյ և Իտալիոյ միջև,
 որոշելու համար զինուորներու նուա-
 զագոյն թիւը, զորո Ռուսիա պարտի
 հանել Աւստրո-Հունգարիոյ վրայ, երբ
 այս տէրութիւնն իր բոլոր ուժերը
 կեդրոնացնէր Իտալիոյ դէմ: Ռուսիա
 մասնաւոր պարտ դէմ յանձնառու
 ըլլալ յարձակիլ Գերմանիոյ վրայ:
 Նոյնպէս, յիշեալ պայմանագրութիւնը
 պաշտօն ունի կարգադրելու զինադա-
 դարներու վերաբերեալ հարցերը, այն
 պարագային ուր անոնք չեն ենթար-
 կուած բանակին վերին հրամանատա-
 րութեան ձեռնհասութեան:

Յօդ. 2.— Իր կողմէ, Իտալիա
 յանձնառու կըլլայ պատերազմին օգ-
 նել, իր տրամադրութեան տակ զըժ-
 նուած միջոցներով, Ֆրանսայի, Անգլիոյ,
 և Ռուսիոյ միացած, բոլոր յայն աէ-
 րութեանց դէմ, որոնք անոնց հետ
 պատերազմի մէջ են:

Յօդ. 3.— Անկլօ-Ֆրանսական նա-
 ւային ուժերը պատրաստ պիտի ըլլան,

զործն և տեւական օգնութիւն մը ընելու Իտալիոյ, մինչև որ աւստրիական նաւատորմը փճանայ կամ մինչև խաղաղութեան կնքումը նաւային պայմանագրութիւն մը պիտի կնքուի առանց պայմանաժամի մտնուելու Անգլիոյ և Իտալիոյ միջև:

ՄԱՆՉԱԹՐԻ ՀՐԱՊԱՐԱԿ

27 փետր.

Այս վերնագրով մեր հրատարակած յօդուածներն, իրենց պարունակութեամբ վստահ ենք որ մասնաւոր օգտակարութիւն մը պիտի ունենան մանիֆեստներու վաճառականներուն:

Մանիֆէստի աշխարհահռչակ թերթին արժանահաւատ տեղեկութիւնները տարակոյս չունինք որ մեծապէս պիտի հետաքրքրեն մեր ընթերցողները ընդհանրապէս:

Ծ. Խ.

Հրատարակը դեռ շատ կայուն է, բայց ընդհանուր առմամբ գիրքը հաստատ են. նոր յանձնառութիւններ ընդունելու համար շատ ոչինչ տեղեր մնացած են թէև, սակայն գինեւոր բարձրացումն ալ հազուադէպ է: Թերևս զլիսաւոր պատճառներէն մին առ է թէ՛ արտադրիչներ անհամեմատօրէն ծանրաբեռնուած ըլլալով չեն ուզեր իրենց գիրքը կտրել, ինչպէս միւս կողմէ ալ վաճառականներ կը դժկամակին երկար պայմանաժամով նոր ապարանքներ տալ:

Բաւականի մի քանի օրուան կայուն հրատարակը բոլորովին ապարդիւն չի կրնար մնալ թէպէտև հրատարակի ապագայի կացութեան վրայ անկարեւոր ազդեցութիւն մը միայն կրնայ գործել: Պէտք է խոստովանիլ սակայն թէ երբ գնոյ անկում պատահի, կարևոր ժամ նակի մը համար տեւական կրլայ միշտ, մինչդեռ ընդհակառակը գնոյ բարձրացումներ այնքան շատ ժամանակի չեն կարօտիր: Չինաստանէ առատ հեռագիրներ հասած են, բայց ստույգ ուէ խանդավառութիւն յառաջ չի բերին հրատարակին վրայ: Հնդկաստանէ հասած հեռագիրներ գրամի հրատարակին անգործունէութեան մասին կը խօսին, որ նոր պահանջներու արգելք կը հանդիսանայ:

Չինաստանի համար անկարեւոր քանակով ճերմակեղէններ արձանագրուած են: Կայկաթայի համար գորշ ապրանքի, ճերմակ կերպասեղէնի և ճաքոնէզի մի քանի ապարանքներ տեղի ունեցան, իսկ «տուֆի»ներու պահանջը տարօրինակ կերպով կասած է: Ճերմակ կերպասի, ճաքոնէզի և տուֆի պահանջներ եղած են Պոլսպէյնի և Գարաշիէն:

Հարաւային Ամերիկա դարձեալ գործեց. իսկ տեղական վաճառականներ բաւական թւով գնումներ ըրին պատրաստ ապրանքի և կամ յանձնումի պայմանաժամի կարճ եղող նիւթերու վրայ:

Ամերիկեան դերձանն հաստատ է, թէև շատ փոքր թւով գործ եղած է: Հնդկաստան բանուած շոշաւի վրայ պահանջներ տուաւ բայց գնումներ ոչ: Ազիպականը հաստատ է նմանապէս, թէև անկարեւոր վաճառումներ տեղի ունեցան:

Լիվրուլի վաճառումները կը հասնին 5000 հակի 24-34ի բարձրացումով: Ամերիկ. և Պրագիւլ բարձրացան 57ի:

Եզիպուր 600 հակ ծախուած է, 100 կէտ անկումով:

Արծաթը 1/8 բէնի անկում մը ունեցաւ 82 1/2 բէնի վրայ:

ՄԱԿԱՆՈՒՆԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Յետ այսու փոխած ըլլալով մականունն, փոխանակ Միքայիլ Բ. Միքայիլ: Եանի պիտի կոչուի Միքայիլ Բ. Ճէվահիրճեան, ուստի զայն ի նկատ առնել կը խնդրեմ արգոյ հասարակութեան:

Տեղական Լուրեր

ՖՐԱՆՍ. Բարձր-գումիւրի տեղոյս պատուիրակ և հիւպատոս Պ. Օսէն Հարթոյ այցելութիւն տուած է հելլէն բարձր գումիւրին:

ՉԵԼԼԷՆ Ընդհ. քունդակտեղէն ստանալով, Իզմիրի մետրոպոլիտանը հետեւալը կը հաղորդէ յայն՝ հասարակութեան, զինուորագրութեան պայմաններուն վրայ: Ազատ են զինուորագրութեանէ. —

1.— Հօրէ և մօրէ անդրանիկ որբերը, երբ ունին չամուսնացած քոյր մը կամ անչափահաս եղբայր մը:

2.— Հօրէ որբ անդրանիկները, որոնց մարերը երկրորդ անգամ ամուսնանալով կը կազմեն իրենց նոր էրկանը հետ անշատ ընտանիք:

3. Այրի մը անդրանիկը կամ միակ որդին, կամ ոչ փեսայ, ոչ զաւակ ունեցող այրի մեծ մօր մը անդրանիկ թուը կամ միակ թուը:

4.— Աշխատելու անկարող հօր մը անդրանիկը կամ միակ որդին, որուն փոքր որդիները 15 տարեկանէն վար են:

ԳեՆՍՏԻ աղջիկ մը, Այ-Քոնստանթինա թաղէն, թոյն խմելով անձնասպան ըլլալ փորձած է, բայց անմիջապէս օգնութեան հասնելով, զայն փոխադրած են հելլէն կ. ի. հիւանդանոցը: Աղջիկը առ այժմ վտանգը անցուցած է:

ԵՐԷԿ կատարուելիք հանրային ցոյցը կարգ մը պատճառներով յետաձգուած է:

Ս. Դ. Հ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Հ Ր Ա Ի Ե Ր

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան տեղոյս մասնաճիւղին բոլոր ընկերներն ու ընկերակիցները կը հրաւիրուին ընդհ. Անդամական ժողովի, որ տեղի պիտի ունենայ 21 Մարտ Կիրակի ժամը ճիշդ 10,30 (Ա. ժ.) Ս. Մեսրոպեան վարժարանի սրահը. ընկեր Ս. Շահէն ապարանքով ըլլալով պիտի բանախօսէ:

Ս. Դ. Հ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ Ի ԴՆԵՆԻ ԴԱՆՈՒՆԻ ԿԻՒՔ

Table with 2 columns: Item and Amount. Items include ֆէրե, Լօնտօն, Նիւ-Եօրք, Բարիզ, Հոմ, Աթէնք, Պերլին, Վիէննա, Չուիցերիս, Թլէպրոմ, Անգլ. ոսկի, Տօլար, Ֆրանք, Լիր. Իտալ., Տրախի, Բուպլի, Մարք, Գուրօն, Ոսկի.

Նոր Բաշեք ՊՈՂՈՍ ՊԱՆԱՊԱՆ

Բացուած է «ՆՈՐ ԲԱՆԱՊԱՆ»-ը Այր-Բարասքէլի փողոցը գտնուող: Ամեն առաւօտ ժամը 10էն մինչև երեկոյան ժամը 5ը բաց է կանանց համար, իսկ 5էն մինչև կէս գիշեր և առաւօտ մինչև ժ. 10 արանց համար: Կիրակի օրերն արամադրելի է արանց համար:

Մաքուր սպասարկութիւն, խնամք և զոհացուցիչ գիներ:

Առաջին անգամ ըլլալով հայտը մը կողմէ բացուած սոյն բաղնիքը կ'յուսուցուի թէ պիտի գտնէ քաջալերութիւն հայ երկպեռ հասարակութեան կողմէ:

Վ ԵՐ Ձ Ի Ն Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն ԵՐ

ՊՈԼՍՈՅ ԶԷՆԸՆԿԵՑՈՒԹԻՒՆԸ

Պոլսէն կը հեռագրեն թէ, համաձայնական զինուորական ուժերն սկսած են տեղան իսլամ բնակչութեան զէնը կեցութեան: Սկիւտարի մէջ գտած են մեծաքանակ զէնք, որոնք գրաւուած են. հանգարտութիւն կը տրէ Պոլսյ և իր շրջակայքին մէջ:

ԹՈՒՐԻՔ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

«Մաթէն» կը տեղեկացնէ թէ թուրք պատմիրակները Բարիզ պիտի ըլլան մտոյս 23ին կամ 25ին: Պէրի թուրք զինական Բիքաթ փաշա անթիլ հեռագրով հրաման ստացած է Բարիզ անցնել և միանալ պատուիրակութեան:

ՏԱՄԱՏ ՖԵՐԻՏ ՓԱՇԱ

Նոյնքան վաւերական ազբը ստացուած տեղեկութեանց համաձայն, Մալի փաշայի գահինը տապալած ըլլալով, նորը կազմած է կրկին Տամատ Ֆէրիտ փաշա:

ՊՈԼՍՈՅ ԽՆԴԻՐԸ

Բարձր. գումիւրներու կողմէ Բ. Դրան տրուած ծանուցագրին մէջ հետեւալը ըսուած է Պոլսոյ մասին տրուած որոշումներու վրայ: — Համաժողովին կողմէ, Պոլսոյ ճակատագրին մասին տրուած որոշումները պիտի վերաքննուին:

ՎԷՆԻՉԵԼՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Լօնտօնէ կը հեռագրեն թէ Պ. Վէնիզէլոս այս շաբթուան վերջ Աթէնք հասած պիտի ըլլայ: Այս յուրը պաշտօնապէս չէ հաստատուած:

Յուշատանի վարչակարար ընդունելու համար մեծ պատրաստութիւններ կը կազմակերպուին որոնք ազգային հանդիսաւոր ցոյցի մը հանգամանք պիտի զգենուն: Աքրօքը և Լիքապէթը պիտի յուսաւորուին Սթատի մէջ գոհարանական ազգային մը պիտի արտասանէ Աթէնքի մետրոպոլիտը ընկերակցութեամբ Ս. Սինօթի 300 հոգինոց երգչախումբ մը պիտի մասնակցի ազգային տօնին, որ երէք օր պիտի տւէ: Հանրային և առևտրական բոլոր հաստատութիւնները, խանութները պիտի փակուին:

ՅՈՒՆԱԿԱՆ ՏԵՍՍԻ ԿԷՏԸ

«Մաթէն» կը գրէ թէ յունական տեսակետը անյապագօրէն կը պահանջէ զաշխարհին մէջ նոր պայմաններու ներմուծումը, որոնք պիտի երաշխաւորեն լրջօրէն և առանց երկդիմութեան, թուրք իշխանութեան տակ ապրելիք ընտանկութեանց պաշտպանութիւնը:

ԹՈՒՐԻՔԻՈՅ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Համաժողովը զբաղած է փոքրամասնութեանց վերաբերեալ Թուրքիոյ գաշնագրին պայմաններով:

Ըստ «Բըթի ժուրնալ» տեղեկութեանց, Ազգերու Ընկերակցութեան պիտի յանձնուի նեղուցներու պահպանութիւնը, և քրիստոնեայ փոքրամասնութեանց շահերուն պաշտպանութիւնը, որոնք ասկէ յետոյ իրենց բողոքները պիտի կրնան լսեցնել և զոհացում ստանալ:

ԹՈՒՐԻՔ ԵՐԵՍՓԱՆՆԵՐԸ ՄԱԼԹԱԻ ՄԵՋ

Վաւերական ազբը կը հաղորդեն թէ Միլլի թէշքիլթիմին պատկանող երեսփոխաններն բոլորն ալ ձերբակալուելով Մալթա փոխադրուած են:

ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Պոլսէն հասած տեղեկութիւններ կ'իմացնեն թէ մայրաքաղաքին լիակատար գրաւումը կատարուած է առանց խռովութեան:

Բազմաթիւ իթիհատականներ ձերբակալուած են: Անոնց մէջ կը նշմարուին հոչակաւորն Ճէմալ փաշա, Թալէաթի գահինին մէջ ծովային նախարար, որ յետոյ անուանուած էր Աուրիոյ փոխարքայ: Ինչպէս նաև զօրավար էսապ փաշա:

ՅՈՒՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Անիլիպաէս որ զաշխարհը պիտի յանձնուի Թուրքիոյ, յունական կառավարութիւնը պիտի հրատարակէ յունական հարցերու լուծումին վերաբերեալ զեկոյց մը: Հաւանական է որ Պ. Վէնիզէլոս անձամբ Խորհրդարանին մէջ որոշումներ ընէ:

Ս.ՄԵՐԻԿԱ ԵՒ ԱՐԵՎԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ

«Թան» կը տեղեկանայ թէ Մ. Նահանգներու կառավարութիւնը Թուրքիոյ հարցերու վերաբերեալ վիճարանութեանց մէջ պիտի ներկայացուի իր զեսպանին կողմէ:

Այս հաղորդակցութիւնը չէ տակաւին ստացած Համաձայնականներու կողմէ իր պատասխանը: Բայց ստույգ կողմէ, Լօնտօնի ամերիկեան զեսպանին ցոյց տուած արամադրութիւնները նախարարի օգնական Մր. Բօլքին մղած են արտապոյտելու իր անձնական հայեացքները արեւելեան հարցին վարչագործութեան համար:

Մ Ծ Օ Ք Ա Ձ Ի Օ Ն Յ. ՊՕՍԹԱՆՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

USASAS Տ Ե ԱՄԵՐԻԿԱՆ ՅԱՅՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԷ ՄԱՆԿԱՎԵՐՉԻՆ ԱՌՈՒՄԱՆՈՒՄԵՆՆԵՐ Կանանց շէք մանիֆեստներ Կանանց քօսիւմէթայիտներ Արանց բալլետներ և քօսիւմէներ Ամերիկեան կաթոնիք Հոլանդացիներու զանազանութիւն Անգլ. նորածեւ մուշակաւ վերաբերուներ ԳԻՆԵՐԸ ԱՆՄԻՑԵԼԻ Երէկուր փողոց թիւ 58 ԻԶՄԻՐ

ՃՕԼԻ ԱԼԷՎՐԱ ԸՆԿ. ԼՄԹՏ.

ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԿԱՂԻ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՈՒՆԻ ՉԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Կանոնադր երթելու Լոնսոնի և Լիվրպոլի և Մեծն Բրիտանիոյ թողու ճարտակակցիսկերում հասնար: Նմանապես ամեն ժամանակինգ օր սպասարկութիւն Նիւ-օրֆի համար:

Գործակալք «Բալարիկ» ապահովագրական հրղեհի ընկերութեան ընթ:

Տիարք Ժ. Տ. ԱԼԷՎՐԱ ԵՒ ՈՐԴԻՔ

ՆԱԽԱՐԿՈՒՆԵՐ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԻՐԷԱ-ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՏՊԱՐԱՆ ԹԱՄԹԻՐԵԱՆ

ՀՐՄՆԱԲԱԾ 1888ԻՆ

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպագրուին գրքեր, գրքոյկներ, տետրակներ, յայտարարու-

թիւներ, հարսանեկան հրատարակութիւններ, զեկուցատոմսեր ու ժամագրներ ևն:

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակ-ներ, ընկալագրեր, վերջապէս վաճառատան մը վերաբերեալ ամեն տեսակ տպագրական գործեր:

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին տեղեկագրիւններ, երկրորդնորո նամակ-հրատար-գրքեր տոմսակներ և վերջապէս տպագրական արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր:

Ամեն լեզուէ: ՀԱՅԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵՐԵՆ, ԱՆԳԼԻԵՐԵՆ, ՅՈՒՆԱՐԵՆ, ՔՈՒՐԴԵՐԵՆ

ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ՓԷՍՊԻՍՈՒԹԻՒՆ

ԱՄՈՆ ՏԵՍԱԿ ԳՈՅՆՍԵՐՈՎ

Մաքուր և խնամեալ գործ օրուան գիներու վրայ

Տպարանն ըստ է առաջին միջնայն կէս գիշեր

խնդրակներու համար

Վ Ճ Ա Ր Մ Ո Ւ Ն Ք Կ Ա Ն Խ Ի Կ

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ“

Թերթիս ծառայը արեւի ընդարձակուած ըլլալով, այժմ ի վիճակի եմք արեւի ըստն սեղ մը զայ ծանուցանանք ըստնին, նոյնիսկ եթէ ամեն օր հարկ ըլլայ միեւնոյն ծանուցումն կրկնել, ինչ որ ասկից առաջ ի վիճակի չէինք ընելու:

Գոհացուցիչ պայմաններ փոքր կամ մեծ, մէկ կամ արեւի ծառայանց համար:

Գիտումներ կ'ընդունուին առտարնէ միջնայն կէս գիշեր:

Վ Ա Ն Խ Ի Կ Վ Ճ Ա Ր Ո Ւ Ս

Փ Ա Ռ Ի Ք Ի

Ճ Ա Մ Բ Ա Ն

«Գործարարութեան համարն է՝ քառի համարն»:

Կը տեղեկանայ թէ թրքական պարտութիւնն ու նահանջը ինչ հետեւանքներ ունենցած էր, թէ հայերը կը ջարդուին ու կը հալածուին, թէ ինք իր գրգռում կերթայ թուրք մեծաւորներուն զանգատելու և ճար մը պահանջելու:

Օտարահպատակներու և մասնաւորապէս ամերիկացիներու արտօնուած ըլլալով ճամբորդել, կ'որոշին միտոմար ձեւաձայն Մտակոյ հայ զիւղէն կը ճարն զգեստներ Օր. Ուրմիտի և Յր. Ատանայի և իսկ վիքթոր կը հազնի Գ. Լինքընի պահեստի հազուադէպ Ե Յուսէֆն ալ իբր իրենց թուրք սպասուորը՝ թրքական տարազով կսկին ճամբորդել:

Ճամբան գիւղ մը կ'իջեանին ուր ականառան կ'ըլլան ջարդի ու տարագրման, իսլամացման ստիպումներուն և ի տես այս ամենուն վերամաններու ստան անտարբերութեան, վերջապէս

այն ամեն բաներու որոնք գործադրուեցան թուրքերուն կողմէ:

Այս բոլոր անձուգարձերուն սակայն վիքթոր սիրահարած է Օր. Ա. զանայի և իր հոգեւոյն պէս կը սիրէ նոյնիսկ նախանձեղով Լինքընէ:

Ազմա յաջողած էր Երզնկան իր ընդունում իր աղջկան քով գալու համար ճամբայ հանել սուլ և իր նախագահութեան ներքե կազմուած ժողովի մը մէջ անպատեհութիւն իսկ չին տեսնել, ի պահանջի հարկին, ամերիկեան միտոմարներու բնակարանը մը տնիկ բռնի ու հոն ապաստանած Օր. Ուրմիտի՝ ձեւակէթ պէյի սիրուելին, առեւանգել և նոյնպէս ձեռք ձգել վիքթորը որ այնքան վախ հասցուցած էր թուրք բանակին:

Լինքըն և վիքթոր տեղեկացած այս որոշման, ելքի միջոց մը կը խորհին, նոյնիսկ անասարկով գտնելով օտարահպատակի մը բնակարանը կ'որոշին Լինքընը ամուսնացնել աղջիկներէն միտոյն հետ, որպէսզի Ամերիկեան հպատակութեան անցնելով զէթ մին ազատուէր: Սակայն զոնէ առժամապէս հեռքերնին կորսնցնելու համար յարմար կը տեսնեն վստահել իսլամի մը տունը փոխադրել աղջիկները:

Այս միջոցին կ'սկսի իրզրուամի տարազութիւնը թուրք կողակարու-

ATLANTIC ASSURANCE COMPANY, LIMITED. 79, CORNHILL, LONDON, E. C. 3. Գ. Ո. ՈՍԿԱՆ ԷՂԵՒՀԱՆՈՒՐ ԴԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՒՆ ԻԶՄԻՐ, ԲԱՍԱԾ ԲԷՇՏԻՄԱԼ ԺՈՂՈՒ ՎԵՐԻ ՅԱՐԿ ԹԻ Զ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ Կրակի դեմ. NATIONAL UNION SOCIETY LTD. LONDON CENTRAL INSURANCE CO. LTD. LONDON Փոխադր. PHOENIX ASSURANCE COMPANY LTD. LIVERPOOL Դիմելը մանրամասնութեանց համար. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ Լ.ՆԻ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

Թիւնը կը յուսայ ձեռք ձգել վիքթորը և Օր. Ուրմիտի: Քաղաքին հրատարակէն հաւաքուած հայուհիներու մէջէն թուրք տարագով կ'իջի մարդ մը կը գտնուի, կը հասկցուի հայ ըլլալը: Կ'ստիպեն դաւանափոխ ըլլալ, խաչը կ'ոսկրտել ու Գուրանը համբուրել: Ահագին բազմութիւն մը Ազմա կը նախագահէ այս եղբուրթեան ու գերման սպաներ կը դիտեն անտարբեր: Երբ իսլամացման պնդումները ծայրայեղութեան կը հասնին ու թուրք զինուորի սուլինը կ'երկարի թուրք տարագով հայուհիին կրծքին, աղջիկը կը հանէ թէվօլէթ մը գրպանէն ու ճակիին գարձուցած կրակիով անձնասպան ըլլալու վայրկեանին տէրվի չի տարագով մարդու մը ձեռքը կը համնի ու չթողուր կրակել վէքթորէն: Երբ որ կը փորձէր սիրուելին փրկել Այնքան վտանգաւոր անցքերէ ու արկածախնդրութիւններէ յետոյ վիքթոր իր օճիքը ձեռք տուած էր այս անգամ և Ազմային ուրախութիւնը չափ սահման չունէր, վերջապէս յաջողած ըլլալով իր ծրագրին մէջ: Կը բանտարկուին Օ. Ատանան և վիքթորը, յուսալով զազանիքներ և ծանոթութիւններ խել Ռուսական բանակին ոյժին ու ծրագրի մասին: Բաւական ձեռք ու տանջանքներ վերջ վիքթոր կը մտադրէ խելագար ձեւ:

(Երբեմնակէ)